

տրաստակամութիւնը՝ այդ ուղղութեամբ գործակցելու Սօջայ Սաֆարի եւ Սօջայ Նազարի հետ :

Դաւրիժեցի կը պատմէ նաեւ որ «Յետ ժամանակաց անցելոց պատմութեանցդ (գիւտին նշխարաց), զոր յառաջդ պատմեցաք, եկեալ է Շահն յԱսպահան, եւ ըստ հանապազորդ սովորութեան իւրում եկեալ է ի տուն Սօջայ Սաֆարին. պատահեալ են եւ անդ ոմանք պատրիկ<sup>12</sup>. եւ ի մէջ խօսից յիշեալ են զնշխարս սրբոց Հռիփսիմեանց, եւ բերեալ են զամենայն նշխարս սրբունւոյն Հռիփսիմեայ առաջի Շահին, ի տեսութիւն ամենեցուն: Եւ յորժամ բացեալ են զնշխարն, յայնժամ պատեհ ժամ դտեալ են պատրիկք, եւ ի Շահէն խնդրեալ են իրբեւ զպարգեւս տալ նոցա մասն ինչ ի նշխարացն այնոցիկ: Եւ Շահն ինքն առեալ է ոսկր մի յոսկերացն, եւ զայն եւս զանակաւն հարեալ է եւ կոտրեալ, զկէս ոսկերն դարձեալ ձգեալ է ի մէջ այլ եւս նշխարացն, եւ զկէսն տուեալ է ի պատրիկսն. եւ նոքա առեալ են եւ ամփոփեալ յինքեանս: Եւ զայլ եւս նշխարսն զհասարակն, հրամայեալ է Սօջայ Սաֆարին տանել եւ պահել. եւ նա բարձեալ ի միջոյ եւ տարեալ ի տեղին՝ ուր յառաջն եղեալ էր, եւ կայ անդէն մինչեւ ցայսօր»<sup>13</sup>: Մեր պատմիչը, զԺբախտարար, զէպօքին թուական չի տար: Այլուստ, սակայն, անտարալոյս գիտենք թէ Շահին այս այցելութիւնը եւ նշխար-ոսկորին Շահէն կոտորելը պատահած է Սօջայ Սաֆարի մահէն յետոյ, իր եղբոր Սօջայ Նազարի օրով: Կ'երեւի թէ Հռիփսիմեանց նշխարները գտնուելէն ի վեր՝ Սօջայ Սաֆարի տունը մասնաւոր տեղ մը կը պահուէին եւ դեռ հոն էին մինչեւ Ռձէ (1658), երբ Դաւրիժեցի Սպահան կ'այցելէ, Յակոբ Կաթողիկոս Զուղայեցիին հետ, ու կը գրէ. «Գնացաք ի տուն Սօջայ Սաֆարին յուխտ եւ յերկրպագութիւն նշխարաց Սրբունւոյն Հռիփսիմեայ, եւ այլ յորով նշխարաց՝ որք կան անդր»<sup>14</sup>:

Սօջայ Սաֆարի մասին ծանօթութեան պատառիկներ կը գտնենք Սպահանէն գրուած Կարմեղեան քարոզիչներու նամակներուն մէջ: Ֆրա ճան Թատէնուս, 1616ի Մարտ 26ին, կը գրէ Հոռոմ, տեղեկացընելով որ Սպահանի Կարմեղեան վանքին շինութեան առեն՝ «չուղեցի Հայեր աշխատցնել, մինչեւ որ Սօջայ Նազար եւ Սօջայ Սաֆար ինծմէ խնդրեցին՝ զանոնք ալ շինութեան համար վարձել»<sup>15</sup>:

1972ին, Նոր Զուղայ այցելած առենս, խնամքով ընդօրինակեցի Սօջայ Սաֆարի տապանագիրը, զոր ամբողջապէս կը ներկայացնեմ

12. Իտալերէն Padre (փատրէ) բառէն, տիտղոս՝ որ կը տրուի Վարդապետներուն, եւ կը նշանակէ՝ Հայր:

13. ԱՌ. ԳԱԻՐԺ., Պտմ., էջ 197:

14. ԱՌ., էջ 196:

15. A Chronicle of the Carmelites in Persia, 1939, London, Vol. I, էջ 232: